

ԵԳԻՊՏԱ, ՀՊԱՏԱԿ ՀԱՅՈՅ  
ՏՈՀՄԱՅԻՆ ՄԻՈՒԹԻԻՆ



Նախարան եւ Նախագիծ



1934



Տպարան «ՍՍՀԱԿ - ՄԵՍՐՈՊ» Փանիքե



ԾԱՆՕԹ — Կը խնդրուի այն ամէն ազգայիններէ որոնք  
համակարծիք են ներկայ գրութեան սկզբունքներուն, հա-  
նին ընդօրոյր իրենց հաւանութեան գիրը հասցնել առժամ-  
եայ ընդհ. Բարտուղար Տիար Գ. Տիւրկերեանի հետեւեալ  
հասցէով

**Mr. K. DURGHERIAN,**

**19 Av. de la Mosquée**

Héliopolis

Télé. 62671



ՄԼՊ

ԳԼԿԻՆԷ




\* \* \* \* \*



ԵԳԻՊՏԱՀՊԱՏԱԿ ՀԱՅՈՑ  
ՏՈՀՄԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ



Նախարան եւ Նախագիծ



1934



Տպարան «ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ» Գանիբէ



ԵԳԻՊՏԱ, ՀՊԱՏԱԿ ՀԱՅՈՑ

ՏՈՀՄԱՅԻՆ ՄԻՈՒԹԻԻՆ



## Նախարան եւ Նախագիծ



Համաշխարհային պատերազմէն ի վեր բոլոր ժողովուրդներու տնտեսական եւ բարոյական վիճակը վերիվայրումներու ենթարկուեցաւ: Այն ազգերը որոնք ապրելու կոչուած են մարդկային մեծ ընկերութեան մէջ, արմատական վերագնահատման ենթարկեցին իրենց գաղափարները եւ գործունէութիւնը: Մեծ փլուզումներէ յետոյ անցեալի փորձառութիւնը հիմնաքարը դարձաւ վերաշինութեան:

Մասնաւորապէս մեր ժողովուրդին համար աշ-



խարհասասան աղէտը եղաւ դասերուն ամենէն իմաստալիցը: Մենք սորվեցանք որ դարերու ընթացքին մեր զերութեան վիճակը այնքան չի վնասեց մեր տոհմային բարքերուն ու հարստութեանց, որքան որ վնասեց շատ քիչ ժամանակուան մէջ մեր կողմէ սըխալ հասկցուած քաղաքական ազատութիւնը: Մենք մոռցանք որ քաղաքական նուաճումներէ առաջ կը գտնուին ժողովուրդի մը տոհմային ու բարոյական հարստութիւնները: Մենք անտեսեցինք, նոյնիսկ ոտնահարեցինք մեր ունեցածը երբ ճամբայ ելանք մեր չունեցածը փնտռելու: Ժամանակը հասած կը համարենք փրկարար եւ իմաստուն նահանջին եթէ չենք ուզեր ազգովին անհետանալ:

Մեր խոր համոզմամբ, հայութեան մեծագոյն աղէտներէն մին եղած է իր ապրած միջավայրին իսկական շահերուն անգիտակցութիւնը: Մեր կարծիքով իւրաքանչիւր հայ համայնք, ժառայելով նախ իր պատկանած երկրին ապահով հիմերու վրայ կը դնէ իր տոհմային կեանքը: Ասիկա չի նշանակեր Համագ-

գային Մեծ Ընտանիքին ուրացումը, ընդհակառակն, ասիկա զայն վերջնող ու բարձրացնող իւրաքանչիւր սիւներուն հաստատութեան եւ ապահովութեան զրաւականն է: Մեր նպատակն է կանգուն պահել Եգիպտահայութեան սիւնը: Մեր նպատակն է անոր հիմը զետեղել խորապէս եւ անվերապահօրէն Եգիպտացի

մեծ ժողովուրդին սրտին մէջ, անոր մեծ Վեհապետին շուքին տակ:



Ժամանակէ մ'ի վեր, մեր ժողովուրդի մեծ մասին ցոյց տուած անտարբերութեան շնորհիւ գաղութիս ազգային գործերը կը գտնուին հայ քաղաքական կուսակցութեանց խնամակալութեան ներքեւ: Թէեւ անոնց քաղաքական նպատակը ուղղուած չէ Եգիպտական կառավարութեան եւ ժողովուրդին դէմ, սակայն բոլորովին օտար է Եգիպտահայոց համայնքի իսկական շահերուն եւ այդ պատճառաւ մենք չենք կրնար գործակցիլ անոնց հետ: Մենք կ'ուզենք նըւիրուիլ միայն ու միայն մեր եկեղեցիներու պայծառացման եւ մեր տոհմային կրթութեան եւ աւանդութեան պահպանման:

Բարեբաղդաբար մենք չենք գտնուիր հին դարերուն շրջանին, երբ մեր ազնուական ցեղին ներկայացուցիչները, ստիպուած էին ուրանալու եւ լքելու իրենց կրօնական եւ ընտանեկան աւանդութիւնները կարենալ ծառայելու համար այս երկրին: Արդէն մեր



նախորդ սերունդները, Նուպար եւ Արթին փաշաներու առաջնորդութեամբ, զիտցած էին ըլլալ ա՛յնքան ուղղամիտ եւ հարազատ Եգիպտացիներ, որքան էին իրենց եկեղեցին եւ ընտանիքը սիրող հայեր:

Մեր կարծիքով, Եգիպտահայութեան համար արաբական եւ հայկական մշակոյթի եղբայրացումը կը ներկայացնէ համամարդկային քաղաքակրթութեան իսկական ոգին: Մենք, Եգիպտահայ քաղաքացիներ, քրիստոնէական ո՛ր ընտանիքին ալ պատկանինք, հիւրեր չենք այս երկրին մէջ, այլ անոր որդեգրեալ զաւակները: Մենք, Եգիպտահայ քաղաքացիներ, բարձրաձայն կը յայտարարենք որ քաղաքական ո՛րեւէ դատ չունինք օտար ո՛րեւէ կառավարութեան հետ եւ ուրիշ երկիրներու մէջ ապրող հայերու հետ մեր յարաբերութիւնները կրնան ըլլալ միայն եւ միայն կրօնական, բարոյական եւ մշակութային:

Վերոյիշեալ սկզբունքներով,

Կը հիմնենք միութիւն մը «Եգիպտահպատակ Հայոց Տոհմային Միութիւն» անունով որուն գլխաւոր նպատակներն են.

1.— Օրինական բոլոր միջոցներով տէր կանգնիլ Ազգ. իշխանութեանց եւ անոր ենթարկուած հաստատութեանց:

2.— Մշակել յատուկ մարմինով Եզիպտահայոց կազմական կանոնագիրը եւ զայն ենթարկել Եզիպտական կառավարութեան վաւերացման:

Ծանօթ.— Սոյն կէտը չի պատկանիր Եգիպտահայ Կարողիկէ եւ Աւետարանական հասարակութեանց սրոնք արդէն ունին իրենց կազմական կանոնագիրը:

3.— Հաստատել մարմին մը, արաբ եւ հայ անձնաւորութիւններէ բաղկացած, երկու ժողովուրդներու յարաբերութեանց զարգացման համար:

4.— Վերակազմել Ազգ. նախակրթարանները պետական դպրոցներու ծրագրով, զուգընթացաբար կրօնական եւ տոհմային կրթութեան:

5.— Հիմնել երկրորդական վարժարան մը պետական վարժարաններու ծրագրով, զուգընթացաբար կրօնական ու տոհմային կրթութեան:

6.— Հնարաւորութիւններ ստեղծել բարձրացնելու համար հայ եկեղեցականներու եւ ուսուցիչներու դիրքն ու զարգացումը, երկրի պահանջներու համաձայն:

7.— Զանալ վառ պահել մեր եկեղեցիներու հանդէպ ժողովուրդին սէրն ու հաւատքը:



8.— Հաստատել մարմին մը որ եզրպտական քաղաքացիական պարտականութեանց եւ իրաւանց հարցերուն մէջ օգտակար հանդիսանայ ազգայիններու:

9.— Հաստատել ակումբ, լսարան, մամուլ, վերոյիշեալ զաղափարներու ծաւալման համար:

Գահիրէ 15 Մարտ 1934

## Նախաձեռնող Մարմին

( ալբուբենի կարգաւ )

Տիար Յ. Ամիրայեան	Տիար Հ. Նասիպեան
„ Յ. Գալփաֆեան	„ Ճ. Զազր
„ Պ. Էրմեհեան	„ Վ. Սանսալեան
„ Կ. Թրեանց	„ Պ. Սելեան
„ Տօբ. Ս. Ժամկոչեան	„ Տօբ. Խ. Սողիկեան Պէյ
„ Մեր Յ. Հանեքեան	„ Գ. Տիւրկերեան
„ Յ. Մարտինեան	„ Տօբ. Ն. Քէչեան
„ Ա. Մեսրեան	„ Լ. Քիրազեան

ԾԱՆՕԹ.— Կը խնդրուի այն ամէն ազգայիններէ որոնք համակարծիք են ներկայ գրութեան սկզբունքներուն, հանին ընդօրէր իրենց հաւանութեան գիրք հասցնել առժամեայ ընդհ. քարտուղար Տիար Գ. Տիւրկերեանի հետեւեալ հասցեով

Mr. K. DURGHERIAN,  
19 Av. de la Mosquée  
Héliopolis  
Tél. 62671

(ثامناً) تأليف لجنة مخصوصة لتقوم بإرشاد الأرمن  
فيما يتعلق بحقوقهم وواجباتهم الوطنية  
(تاسعاً) تأسيس الأندية وقاعات الخطابة والجراند الخ  
لنشر المبادئ سالفه الذكر م

---

### اللجنة التمهيدية (بالترتيب الهجائي)

حضرة ب. انمكچيان	حضرة المحامي يعقوب سر كيس
» ا. اميران	» الدكتور خ. صوغكيان بك
» ج. تريانتس	» ه. قالباكيان
» الدكتور س. جامكوتشيان	» الدكتور ن. كيتشچيان
» چانيج شاكر	» ل. كيرازيان
» ك. دورجريان	» ه. مردينيان
» و. سنداليان	» ا. مسدچيان
» ب. سيليان	» ه. ناسيديان

---

ملحوظة: لجميع الاستعلامات يخبر السكرتير العام حضرة  
كاريكين دورجريان بمصر الجديدة بشارع الجامع نمرة ١٩  
تليفون نمرة ٦٢٦٧١